

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) հայտարարում է արտաքին մրցույթ՝ Նախարարության երկաթուղային, ջրային և օդային տրանսպորտի քաղաքականության վարչության օդային և ջրային տրանսպորտի քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 22-33.9-Մ2-3) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

Արտաքին մրցույթին կարող են մասնակցել ՀՀ քաղաքացիները, որոնք բավարարում են հայտարարված թափուր պաշտոնի անձնագրի պահանջներին:

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Նախարարության երկաթուղային, ջրային և օդային տրանսպորտի քաղաքականության վարչության օդային և ջրային տրանսպորտի քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 22-33.9-Մ2-3) պաշտոնի բնութագրի, պաշտոնն զբաղեցնող քաղաքացիական ծառայողի համար սահմանված իրավունքների, պարտականությունների, պաշտոնին ներկայացվող պահանջների՝ պաշտոնի համար պահանջվող կրթության, աշխատանքային ստաժի, մասնագիտական գիտելիքների, կոմպետենցիաների, ինչպես նաև աշխատանքի կազմակերպական լիազորությունների և ղեկավարման շրջանակների մասին տեղեկատվությունը ներառված է պաշտոնի անձնագրում, որի էլեկտրոնային օրինակին կարող էք ծանոթանալ կից:

Նախարարության երկաթուղային, ջրային և օդային տրանսպորտի քաղաքականության վարչության օդային և ջրային տրանսպորտի քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 22-33.9-Մ2-3) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները պետք է անձամբ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն (հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն N 3) ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1. դիմում (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),
2. անձնագիր և/ կամ նույնականացման քարտ՝ պատճեններով (եթե անձը նույնականացման կամ սոցիալական քարտ չի ներկայացնում, ապա անհրաժեշտ է ներկայացնել անձին հանրային ծառայության համարանիշ տրամադրելու մասին տեղեկանք կամ հանրային ծառայության համարանիշի տրամադրումից հրաժարվելու մասին տեղեկանք՝ պատճեններով),
3. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ՝ պատճենով,
4. աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթուղթ՝ պատճենով,
5. արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկ՝ պատճենով կամ դրան փոխարինող ժամանակավոր գորակոչային տեղամասից կցագրման վկայական՝ պատճենով,
6. մեկ լուսանկար 3+4 սմ չափսի:

Մրցույթին մասնակցելու համար դիմումներն ընդունվում են 2020 թվականի փետրվարի 14-ից մինչև 2020 թվականի փետրվարի 25-ը ներառյալ՝ աշխատանքային օրերին: Դիմումները յուրաքանչյուր աշխատանքային օր ընդունվում են ժամը 9.30-ից 12.30-ը և 14:00-ից 17:00-ը:

Մրցույթի թեստավորման փուլը կանցկացվի 2020 թվականի մարտի 18-ին՝ ժամը 15:00-ին, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում (հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն N 3):

Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի 2020 թվականի մարտի 20-ին՝ ժամը 14:30-ին, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում (հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն N 3):

Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի <<Հարցարան>> ձևաչափով:

Հիմնական աշխատավարձը 212309 (երկու հարյուր տասներկու հազար երեք հարյուր ինը) ՀՀ դրամ է:

Նշված պաշտոնին հավակնող անձը պետք է լինի բարեկիրթ, պարտաճանաչ, հավասարակշռված, գործնական, ունենա նախաձեռնողականություն և պատասխանատվության զգացում:

Թեև տում ընդգրկվող մասնագիտական գիտելիքների վերաբերյալ թեստային առաջադրանքները կազմված են հետևյալ բնագավառներից՝

- Սահմանադրություն. հոդվածներ՝ 89, 91, 93, 147
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=102510>
- «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք. հոդվածներ՝ 2, 4, 6, 10, 22 հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=131562>
- «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք հոդվածներ՝ հոդված 2, 3, 4, 5, 6, 15 հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=132720>
- «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք հոդվածներ՝ 4, 10, 12, 17, 21, 23, 24, 37
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=120807>
- «Ավիացիայի մասին» ՀՀ օրենք, հոդվածներ՝ 2, 4, 5, 7-13, 15, 19, 21, 25, 31, 32, 35, 36, 44, 45, 52, 54, 55, 63, 66, 67
հղումը՝ <https://www.arlis.a/DocumentView.aspx?DocID=137070>
- «Տրանսպորտի մասին» ՀՀ օրենք, հոդվածներ՝ 1, 4, 15, 16
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=94473>
- <<Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին>> Կոնվենցիա (Չիկագո 07.12.1944թ.),
հոդվածներ՝ 19, 20, 96
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=81202>
- <<Միջազգային օդային փոխադրումներին վերավերող որոշակի կանոնների միասնականացման մասին>> Կոնվենցիա (Վարշավա 12.10.1929թ.), հոդվածներ՝ 2, 3, 4, 9, 10, 11, 13, 14, 16, 17
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=81040>

- Ինֆորմատիկա 7-րդ դասարան: Դասագիրք հանրակրթական դպրոցի համար: Ս.Ս.Ավետիսյան, Ա. Վ. Դանիելյան: Մասնագիտական խմբագիր՝ Ռ.Վ. Աղգաշյան: Երևան 2012, էջեր՝ 5, 38, 40, 54, 98,99

հղումը՝ <http://fliphtml5.com/fumf/egdx>

- <<Գրավոր խոսք>>, Վազգեն Գաբրիելյան, երրորդ լրամշակված հրատարակություն, Լիմուշ հրատարակչություն, Երևան 2012, էջեր՝ 70, 71, 73, 94-97, 104, 106-110, 114, 124-126,134,137,142,147-148,198-201

հղումը՝ <http://www.parliament.am/library/books/gravor-khosq.pdf>

Թեստում ընդգրկվող կոմպետենցիաների վերաբերյալ թեստային առաջադրանքները կազմված են տվյալ պաշտոնի համար սահմանված և ՀՀ կառավարության պաշտոնական ինտերնետային կայքէջում՝

հրապարակված ընդհանրական կոմպետենցիաներից մասնավորապես՝

- <<Հաշվետվությունների մշակում>> կոմպետենցիա,
հղումը՝ https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/6.pdf

- <<Խնդրի լուծում>> կոմպետենցիա, հղումը՝
https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/4.pdf

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները մրցույթի վերաբերյալ հարցերի և լրացուցիչ տեղեկությունների համար կարող են դիմել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն (հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն N 3, հեռախոսահամար՝ 010-511-355, էլեկտրոնային փոստի հասցե՝ n.kirakosyan@mta.gov.am):

**ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ, ՋՐԱՅԻՆ ԵՎ ՕՂԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՕՂԱՅԻՆ ԵՎ ՋՐԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ**

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) երկաթուղային, ջրային և օդային տրանսպորտի քաղաքականության վարչության (այսուհետ՝ Վարչություն) օդային և ջրային տրանսպորտի քաղաքականության բաժնի (այսուհետ՝ Բաժնի) գլխավոր մասնագետ (ծածկագիրը՝ 22-33.9-Մ2-3)

1.2. Ենթակա և հաշվետու է

Գլխավոր մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի մյուս գլխավոր մասնագետը կամ Բաժնի ավագ մասնագետը:

1.4. Աշխատավայրը

Հայաստան, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարության տուն 3

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1) իրականացնում է օդային տրանսպորտի բնագավառի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերի նախագծերի մշակումը.

2) իրականացնում է օդային տրանսպորտի բնագավառի վերաբերող սոցիալ-տնտեսական, հեռանկարային, ընթացիկ և զարգացման ծրագրերի նախագծերի մշակումը.

3) իրականացնում է օդային տրանսպորտի բնագավառի մոնիթորինգի իրականացումը.

4) իրականացնում է օդային տրանսպորտի շահագործման բնագավառում պետական քաղաքականության իրականացմանն ուղղված միջոցառումների մշակումը.

5) իրականացնում է օդային տրանսպորտի բնագավառում գիտատեխնիկական առաջընթացի ապահովմանն ուղղված միջոցառումների մշակումը.

6) իրականացնում է օդային տրանսպորտի բնագավառում միջպետական համագործակցությանը, իր իրավասության սահմաններում միջազգային կազմակերպություններում նախարարության շահերը ներկայացնելը.

7) իրականացնում է առաջարկություններ ոլորտի տվյալ բյուջետային տարվա ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորում պահանջող ծրագրերի վերաբերյալ (ծրագրային բյուջետավորման ձևաչափով) և ապահովում է դրանց կատարումն ու արդյունքային ցուցանիշները ներկայացնելը:

8) իրականացնում է առաջարկություններ ներկայացնելը պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում մասնակցի (բաժնետիրոջ) լիազորությունների

իրականացման, ինչպես նաև պետական ոչ առևտրային կազմակերպությունների, ենթակա մարմինների ու պետական հիմնարկների կառավարման վերաբերյալ.

10) իրականացնում է օդային տրանսպորտի բնագավառին վերաբերող տեխնիկական ակտերի ու ստանդարտների մշակման աշխատանքները.

11) իրականացնում է օդային տրանսպորտի ձևավորման և զարգացման քաղաքականության մշակումը.

12) իրականացնում օդային տրանսպորտի ոլորտում տեխնոլոգիական նորարարության նպատակային ծրագրերի մշակումը և դրանց մոնիթորինգի իրականացման աշխատանքները.

13) մասնակցում է Հայաստանի Հանրապետությունում ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի պետական մասնագիտական քննության անցկացման կազմակերպման աշխատանքներին.

Իրավունքները

1) իրականացնել օդային տրանսպորտի բնագավառի քաղաքականության վերաբերող առաջարկների, տեղեկանքների, հաշվետվությունների, միջնորդագրերի, զեկուցագրերի, վերլուծությունների և այլ գրությունների պատրաստումը.

2) իրականացնել ոլորտի իրավական դաշտի ուսումնասիրության, համապատասխան տեղեկատվության հավաքագրման, ամփոփման և երկաթուղային տրանսպորտի բնագավառի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերի, սոցիալ-տնտեսական, հեռանկարային, ընթացիկ և զարգացման ծրագրերի նախագծերի պատրաստումը.

3) իրականացնել ոլորտին վերաբերվող հարցերի շուրջ սահմանված կարգով կազմակերպել և իրականացնել բողոքների, դիմումների և առաջարկների քննարկումներ և դրանց հետ կապված իրավաբանական ու ֆիզիկական անձանց ընդունելություն.

4) իրականացնել Բաժնի աշխատանքային ծրագրերի մշակումը.

5) այլ մարմիններից, պաշտոնատար անձանցից ստանալ Բաժնի առջև դրված գործառույթների և խնդիրների իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր.

6) մասնակցել Բաժնի առջև դրված գործառույթների և խնդիրների իրականացման հետ կապված, խորհրդակցություններին.

7) ներկայացնել զեկուցումներ Բաժնի կողմից սպասարկվող ոլորտին առնչվող համապատասխան մարմիններում, ինչպես նաև պաշտոնատար անձանց կողմից կատարվող աշխատանքների վիճակի մասին.

8) համագործակցել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ.

9) մասնակցել օդային տրանսպորտի բնագավառում միջպետական համագործակցությանը, իր իրավասության սահմաններում ներկայացնել նախարարության շահերը միջազգային կազմակերպություններում.

10) իրականացնել սույն պաշտոնի անձնագրով սահմանված և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված այլ լիազորությունների իրականացումը.

Պարտականությունները

1) իրականացնել օդային տրանսպորտի բնագավառի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերի նախագծերի մշակումը.

2) իրականացնել օդային տրանսպորտի բնագավառի վերաբերող սոցիալ-տնտեսական, հեռանկարային, ընթացիկ և զարգացման ծրագրերի նախագծերի մշակումը.

3) իրականացնել օդային տրանսպորտի շահագործման բնագավառում պետական քաղաքականության իրականացմանն ուղղված միջոցառումների մշակումը.

4) իրականացնել օդային տրանսպորտի բնագավառում գիտատեխնիկական առաջընթացի ապահովմանն ուղղված միջոցառումների մշակումը.

5) իրականացնել օդային տրանսպորտի բնագավառում միջպետական համագործակցությանը, իր իրավասության սահմաններում միջազգային կազմակերպություններում նախարարության շահերը ներկայացնելը.

6) իրականացնել առաջարկություններ ոլորտի տվյալ բյուջետային տարվա ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորում պահանջող ծրագրերի վերաբերյալ (ծրագրային բյուջետավորման ձևաչափով) և ապահովում է դրանց կատարումն ու արդյունքային ցուցանիշները ներկայացնելը:

7) իրականացնել առաջարկություններ ներկայացնելը պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում մասնակցի (բաժնետիրոջ) լիազորությունների իրականացման, ինչպես նաև պետական ոչ առևտրային կազմակերպությունների, ենթակա մարմինների ու պետական հիմնարկների կառավարման վերաբերյալ.

8) իրականացնել օդային տրանսպորտի բնագավառին վերաբերող տեխնիկական ակտերի ու ստանդարտների մշակմանը.

9) իրականացնել օդային տրանսպորտի ձևավորման և զարգացման քաղաքականության մշակումը.

10) իրականացնել օդային տրանսպորտի ոլորտում տեխնոլոգիական նորարարության նպատակային ծրագրերի մշակումը և դրանց մոնիթորինգի իրականացման աշխատանքները.

11) մասնակցել Հայաստանի Հանրապետությունում ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի պետական մասնագիտական քննության անցկացման կազմակերպման աշխատանքներին.

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն:

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառնությունների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ՝

3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ.

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաները՝

- Ծրագրերի մշակում
- Խնդրի լուծում
- Հաշվետվությունների մշակում
- Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
- Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիներ՝

- Արտակարգ իրավիճակներում կառավարում
- Բանակցությունների վարում
- Կոնֆլիկտների կառավարում
- Բողոքների բավարարում
- Ժամանակի կառավարում
- Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
- Փաստաթղթերի նախապատրաստում

4. Կազմակերպական շրջանակը

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2 . Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման և (կամ) ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում իրավունքների տրամադրման և (կամ) դիմումների քննարկման արդյունքում որոշումների նախապատրաստման և (կամ) ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որոշումների կայացման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման արդյունքների ապահովման մասնագիտական գործունեության որոշակի ոլորտին վերաբերող համապետական ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: